

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երևանի պետական համալսարանի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի

2025 թ. հունվարի 24-ին կայացած թիվ 10 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի ԳԽ հունվարի 24-ի հարցման կարգով թիվ 10 արտահերթ նիստի օրակարգում ներառված էր 4 հարց:

1. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի 2024-2025 ուս. տարվա բակալավրիատի ավարտական կուրսերի առկա և հեռակա ուսուցմամբ ուսանողների ավարտական աշխատանքների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:
2. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի 2022-2024թ փետրվար և մարտ ամիսներին հրամանագրված հայցորդների տարեկան ատեստավորման հարցը:
3. ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և ԻՀ ազգային հետազոտությունների խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-իտալական համատեղ «ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ – 2023» միջազգային մրցույթի շրջանակներում իրականացվող թեմաների ամփոփիչ հաշվետվության հարցը:
4. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում «Շրջակա միջավայրի պահպանություն և կենսավերահսկողություն» մագիստրոսական կրթական ծրագրի մեկնարկի հարցը:

1. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի 2024-2025 ուս. տարվա բակալավրիատի ավարտական կուրսերի առկա և հեռակա ուսուցմամբ ուսանողների ավարտական աշխատանքների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան, կ.գ.դ., դոցենտ Կ. Ա. Ղազարյանը: Նա ներկայացրեց կենսաբանության ֆակուլտետի 2024-2025 ուս. տարվա բակալավրիատի «Կենսաբանություն» կրթական ծրագրի առկա (34 ուսանող) և հեռակա (22 ուսանող) ուսուցմամբ, «Կենսաքիմիա» (28 ուսանող) և «Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա» (9 ուսանող) կրթական ծրագրերի առկա ուսուցմամբ ուսանողների ավարտական աշխատանքների թեմաները և գիտական ղեկավարներին:

Ստորև ներկայացված է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի 2024-2025 ուս. տարվա առկա և հեռակա ուսուցմամբ ուսանողների ավարտական աշխատանքների թեմաների և գիտական ղեկավարների ցուցակը:

**«Կենսաբանություն» կրթական ծրագիր  
ԲԱԿԱԼԱՎՐ 4-ՐԴ ԿՈՒՐՍ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ)**

**Գենետիկայի և բջջաբանության ամբիոն**

1. Հարթենյան Դիանա Արամի - ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Հարությունյան Ռ.Մ.  
Նեկրոզի մակարդակի գնահատումը COVID-19 հիվանդների արյան բջիջներում հոսքային ցիտոմետրիայի մեթոդով  
Evaluation of necrosis level in blood cells of COVID-19 patients by flow cytometry
2. Մանուկյան Անահիտ Արտավազդի - ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Բաբայան Ն.Ս.  
Ուռուցքների 2D և 3D մոդելներում ԴՆԹ-ի վնասվածքների համեմատական վերլուծությունը ԴՆԹ-կոմետ մեթոդով  
Comparative analysis of DNA damage in 2D and 3D tumor models using the comet assay
3. Նազարյան Տատյանա Արայի - ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Բաբայան Ն. Ս.  
Ուռուցքների 2D և 3D մոդելներում բջիջների կենսունակության վերլուծությունը  
Analysis of cell viability in 2D and 3D tumor models
4. Ղազարյան Լիլիթ Գարուշի - ղեկավար՝ դասախոս Սարգսյան Ա.Ա.  
Մարդու պապիլոմավիրուսի ԴՆԹ-ի քանակական գնահատումը ՊՇՌ մեթոդով  
Quantitative determination of human papillomavirus DNA by PCR
5. Երզնկյան Միլենա Ստեփանի - ղեկավար՝ դասախոս Սարգսյան Ա.Ա.  
BRAF օնկոգենի մուտացիաների վերլուծությունը ՊՇՌ մեթոդով  
Analysis of BRAF oncogene mutations by PCR
6. Մախյան Աստղիկ Միերի- ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Հարությունյան Ռ.Մ.  
Արյան մակարդման խանգարումների հետ կապված գենային պոլիմորֆիզմների գնահատումը ՊՇՌ մեթոդով  
Evaluation of gene polymorphisms associated with blood coagulation disorders using PCR
7. Ֆահրադյան Էլինա Էդուարդի - ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Հարությունյան Ռ.Մ.  
Ֆյուորեսցենտ in-situ հիբրիդիզացիայի մեթոդի կիրառումն ախտորոշիչ նպատակով  
Application of the fluorescence in situ hybridization method in diagnostics

**Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն**

8. Դանիելյան Մանուշակ Արսենի – ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Քսազիկյան Ն.Ն.

Մարզիկների որոշ հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների փոփոխությունների բնույթը ֆիզիկական բեռնվածության պայմաններում  
Nature of changes in some psychophysiological indicators of athletes under conditions of physical load

9. **Հունական Գևորգ Աշոտի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Սահակյան Ս. Գ.**  
Սուր թթվածնաքաղցը՝ որպես երիկամային ֆունկցիայի խանգարման պատճառ  
Acute hypoxia as a cause of a renal failure
10. **Աբաջյան Թամարա Արմենի – ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ադամյան Ն. Յու.**  
Երկարավուն ուղեղի շնչառական ցանցանման նեյրոնների գործունեության փոփոխությունները թթվածնաքաղցի պայմաններում  
Changes in the activity of respiratory reticular neurons in the medulla oblongata under conditions of oxygen starvation
11. **Ստեփանյան Զարիկ Պողոսի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Կարապետյան Ա. Ֆ.**  
Սուր հիպօքսիայի և չիչխանի յուղի ազդեցության պայմաններում առնետների գլխուղեղի հյուսվածաբանական փոփոխությունների ուսումնասիրությունը  
Study of histological changes in the brain of rats in the conditions of acute hypoxia and effects of sea buckthorn oil
12. **Հակոբյան Գոհար Արմենի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Կարապետյան Ա.Ֆ.**  
Առնետների թոքերի հիստոմորֆոլոգիական փոփոխությունների ուսումնասիրությունը սուր հիպօքսիայի և չիչխանի յուղի ազդեցության պայմաններում  
Study of histomorphological changes in rat lungs under conditions of acute hypoxia and exposure to sea buckthorn oil
13. **Գրիգորյան Նոնա Ռադիկի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Գրիգորյան Ա.Վ.**  
Առնետների լյարդի մորֆոֆունկցիոնալ փոփոխությունների ուսումնասիրությունը սուր հիպօքսիայի և չիչխանի յուղի ազդեցության պայմաններում  
Study of morphofunctional changes in rat liver under conditions of acute hypoxia and exposure to sea buckthorn oil
14. **Պետրոսյան Հասմիկ Շիրազի – ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Գրիգորյան Ա.Վ.**  
Առնետների սրտամկանի հիստոմորֆոլոգիական փոփոխությունների ուսումնասիրությունը սուր հիպօքսիայի և չիչխանի յուղի ազդեցության պայմաններում  
Study of histomorphological changes in rat myocardium under conditions of acute hypoxia and exposure to sea buckthorn oil
15. **Պողոսյան Տաթև Գեղամի - ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Գրիգորյան Ա.Վ.**  
Առնետների լյարդի շարակցահյուսվածքային հենքի փոփոխությունների ուսումնասիրությունը սուր հիպօքսիայի և չիչխանի յուղի ազդեցության պայմաններում  
Study of changes in the connective tissue structure of the liver of rats under conditions of acute hypoxia and exposure to sea buckthorn oil

## Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոն

16. Մելքոնյան Անուշ Կարենի – ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Համբարյան Լ.Ռ.  
Ֆիտոպլանկտոնի տարբեր խմբերի էկոլոգիական դերը Սևանա լճի էվտրոֆացման գործընթացում  
The ecological role of different phytoplankton groups in the eutrophication process of Lake Sevan.
17. Պողոսյան Վերոնիկա Գևորգի – ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Եսոյան Ս.Ս.  
Գինու ենթամթերքների կիրառումն ալկալիական հողերի ժամանակակից և կայուն մշակման հայեցակարգում  
Application of wine by-products in the concept of modern and sustainable cultivation of alkaline soils
18. Ստեփանյան Էլինա Մկրտիչի – ղեկավար՝ գ.գ.թ. Սինխ Ա.  
Ցինկի օքսիդի և սիլիցիումի նանոմասնիկների ազդեցությունը ցորենի (*Triticum aestivum* L.) գենոտիպերի սերմերի ծլունակության վրա աղիության սթրեսի պայմաններում  
Influence of zinc oxide and silicon nanoparticles on seed germination of wheat (*Triticum aestivum* L.) genotypes under salinity stress.
19. Մարգարյան Լուսինե Աշոտի – ղեկավար՝ գ.գ.թ. Սինխ Ա.  
Ցինկի օքսիդի և սիլիցիումի նանոմասնիկների ազդեցությունը գարու (*Hordeum vulgare* L.) գենոտիպերի ծլունակության վրա աղիության սթրեսի պայմաններում  
Influence of zinc oxide and silicon nanoparticles on seed germination of barley (*Hordeum vulgare* L.) genotypes under salinity stress.
20. Տոնոյան Սվետլանա Վրեժի – ղեկավար՝ ասպիրանտ Մարգարյան Գ.Ս.  
Մասիսի տարածաշրջանի գյուղատնտեսական նշանակության հողատարածքների աղակալվածության աստիճանի գնահատումը  
Assessment of the degree of salinization of agricultural lands in Masis province
21. Բայաթյան Շուշան Էմինի – ղեկավար՝ ասպիրանտ Հարությունյան Ա.Ս.  
Մասիսի տարածաշրջանի ստորերկրյա ջրերի ոռոգելի հասկությունների գնահատումը  
Assessment of the irrigation properties of groundwater in the Masis province

## Բուսաբանության և սնկաբանության ամբիոն

22. Վարդանյան Խանում Գևորգի – ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Նանագյուլյան Ս.Գ.  
Որոշ միկոռիզագոյացնող սնկերի ազդեցությունը սոճիների սերմերի ծլունակության և աճի վրա  
Influence of some mycorrhizal fungi on the germination and growth of pine seeds

23. Եղիյան Քնարիկ Նորայրի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Զաքարյան Ն.Հ.  
 Տարբեր տեր բույսերի վրա մակաբուծող *Phelipanche ramosa* Pomel տեսակի կենսասակտիվ միացությունների գնահատումը  
 Evaluation of bioactive compounds in the parasitic species *Phelipanche ramosa* Pomel under different host plant conditions
24. Հակոբյան Մերի Վազգենի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Էլոյան Ի.Մ.  
 ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի հարակից կանաչ տարածքի լանդշաֆտային ձևավորումը  
 Landscaping of the green area nearby to the Faculty of Biology of YSU
25. Ղազարյան Այոնա Արտուրի- ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Էլոյան Ի.Մ.  
 ԵՊՀ պրոֆեսոր Լ. Ղարիբջանյանի անվան պատմության թանգարանի օդի մանրադիտակային սնկերով աղտոտվածության գնահատումը  
 Air pollution assessment of YSU History Museum named after Professor L. Gharibjanyan with microscopic fungi
26. Վարդանյան Մարիամ Աշոտի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Պողոսյան Ա.Վ.  
 Որոշ եթերայուղերի հակասնկային ակտիվությունը ԵՊՀ պրոֆեսոր Լ. Ղարիբջանյանի անվան թանգարանի օդից անջատված պայմանական պաթոգեն սնկերի նկատմամբ  
 Antifungal activity of some essential oils against opportunistic pathogenic fungi isolated from the air of the YSU History Museum named after Professor L. Gharibjanyan
27. Թովմասյան Աքսաննա Համբարձումի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Շահազիզյան Ի.Վ.  
 Trichoderma ցեղը և դրա մետաբոլիտների կիրառման որոշ հեռանկարները  
 The genus Trichoderma and some prospects for the use of its metabolites
28. Հայրապետյան Մարիամ Արտակի- ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Շահազիզյան Ի.Վ.  
 Պահպանման ընթացքում բանջարաբուստանային որոշ մշակաբույսերի պաթոգենների տեսակային բազմազանության վերլուծությունը  
 Analysis of species diversity of pathogens of some vegetable crops during storage
29. Մարտիրոսյան Արաքսյա Արմանի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Շահազիզյան Ի.Վ.  
 Խաղողի առավել տարածված պաթոգեն միկոբիոտայի ուսումնասիրությունները  
 Studies of the most common pathogenic mycobiota of grapes

#### Կենդանաբանության ամբիոն

30. Սահակյան Գոհար Հակոբի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ա.Ս. Ղազարյան  
 Կորոնավիրուսի ուսումնասիրումը մանր կաթնասունների օրգանիզմում  
 Study of the coronavirus in the organism of small mammals
31. Սանգսարյան Ելենա Արթուրի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ա.Ս. Ղազարյան  
 Թեղուտի հանքավայրի կաթնասունների բազմազանության ուսումնասիրությունը  
 Study of mammal diversity in the Teghut mine

32. Պապյան Մոնիկա Աշոտի - ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Մ.Ս. Առաքելյան  
 Հայաստանի Հանրապետության որոշ մարզերում խոշոր եղջերավոր կենդանիների արյան մակարույծների և դրանց փոխանցողների ուսումնասիրությունը  
 Study of blood parasites and their vectors in large cattle in several regions of the Republic of Armenia.
33. Կարապետյան Մարիամ Կարենի - ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Մ.Ս. Առաքելյան  
 Araneidae ընտանիքի բազմազանության և տարածվածության ուսումնասիրությունը Հայաստանում  
 Study of the diversity and distribution of the family Araneidae in Armenia
34. Խաչատրյան Էմմա Ռոուզ Վարդանի - ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Մ.Ս. Առաքելյան  
 Շնագզինների կարիոտիպերի բջջագենետիկական առանձնահատկությունները  
 Cytogenetic features of the karyotypes of canids

***ԲԱԿԱԼԱՎՐ 5-ՐԴ ԿՈՒՐՍ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)***  
***Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն***

1. Չալյան Աննա Սուրենի – ղեկավար՝ կ.գ.դ. Գալստյան Հ. Գ.  
 Մրտի ռիթմի փոփոխականությունը հոգեֆիզիոլոգիական թեստերի ազդեցությամբ  
 Changes in heart rate variability under the influence of psychophysiological tests
2. Հակոբյան Սյուզաննա Արտյոմի - ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Գրիգորյան Ա. Վ.  
 Առնետների արյան լեյկոցիտների քանակական փոփոխությունները սուր հիպոքսիայի և չիչխանի յուղի ազդեցության պայմաններում  
 Quantitative changes in blood leukocytes in rats under conditions of acute hypoxia and exposure to sea buckthorn oil
3. Բաբայան Ելենա Արամի - ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Գրիգորյան Ա. Վ.  
 Առնետների արյան էրիթրոցիտների քանակական փոփոխությունները սուր հիպոքսիայի և չիչխանի յուղի ազդեցության պայմաններում  
 Quantitative changes in erythrocyte in rats under acute hypoxia and exposure to sea buckthorn oil
4. Լոռենց Արամ Դավիթի – ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Սահակյան Ս.Գ.  
 Մատուտակի պաշտպանիչ դերը առնետների հեմատոլոգիական ցուցանիշների վրա  
 Protective role of stevia on hematological indices in rats

*Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոն*

5. Հարությունյան Էլեն Ալեքսանի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Համբարյան Լ.Ռ.  
Պլանկտոնային միկրոօրգանիզմների զարգացման առանձնահատկությունները ջրամբարներում  
Peculiarities of the development of planktonic microalgae in the reservoirs
6. Պետրոսյան Արամ Վաչիկի - ղեկավար՝ դասախոս Հարությունյան Ա. Ս.  
Աղակալվածության ազդեցությունը գարու (Ալաշկերտ սորտի) մորֆոֆիզիոլոգիական տարբեր ցուցանիշների վրա  
Effect of salinity on different morphophysiological parameters of barley (Alashkert variety)
7. Հարությունյան Սյուզաննա Գևորգի – ղեկավար՝ կ.գ.թ. ասիստենտ Եսոյան Ս.Ս.  
Պլաստիկի կենսաքայքայումը որդերի միջոցով որպես անթափոն արտադրության միջոց շրջանաձև տնտեսության համատեքստում  
Biodegradation of plastic by worms as a means of waste-free production in the context of circular economy

*Գենետիկայի և բջջաբանության ամբիոն*

8. Ասատյան Անժելա Սուրենի - ղեկավար՝ դասախոս Սարգսյան Ա. Ա.  
MDM2 գենի ամպլիֆիկացիայի գնահատումը լիպոսարկոմաների ախտորոշման նպատակով  
Evaluation of MDM2 gene amplification for the diagnosis of liposarcomas
9. Հովհաննիսյան Ժենիկ Վանուշի - ղեկավար՝ դասախոս Սարգսյան Ա. Ա.  
Հասարակ հերպես վիրուսի քանակական գնահատումն իրական ժամանակի պոլիմերազային շղթայական ռեակցիայի միջոցով  
Quantification of herpes simplex virus by real-time polymerase chain reaction
10. Մովսիսյան Տաթևիկ Վարդանի - ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Բարսյան Ն. Ս.  
5-ֆտորուրացիլի ածանցյալների հակաուռուցքային ակտիվությունը in vitro  
Antitumor activity of 5-fluorouracil derivatives in vitro
11. Նախշունյան Նարե Վահեի - ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Հարությունյան Ռ.Մ.  
Հիմնական օնկոմարկերների կիրառությունն ախտորոշման մեջ  
Application of main oncomarkers in diagnostics

*Բուսաբանության և սնկաբանության ամբիոն*

12. Մկրդումյան Լենա Էդիկի – ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Պողոսյան Ա.Վ.  
Հրազդան քաղաքի Շառլ Ազնավուրի անվան զբոսայգու բրիոֆլորան  
The brioflora of Charles Aznavour Park in Hrazdan city
13. Հակոբյան Զարինե Ավետիսի – ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Էլոյան Ի.Մ.  
Penicillium ցեղի ներկայացուցիչները որպես սննդամթերքների ախտոտիչներ  
Representatives of the genus Penicillium as contaminants of food products

14. Մանուկյան Վեներա Կարենի – ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Շահազիզյան Ի. Վ.  
Ջրվեժ արգելոցապարկային համալիրի ֆիտոսանիտարական ախտորոշումը  
Phytosanitary diagnosis of the Jrvezh preserve and park complex
15. Հովսեփյան Հռիփսիմե Թումի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Զաքարյան Ն.Հ.  
Անդրկովկասի էնդեմիկ մակարոյծ *Orobanche laxissima* Uhlich & Rätzel տեսակի  
տարբեր պոպուլյացիաների կենսասակտիվ միացությունների գնահատումը  
Evaluation of bioactive compounds in different populations of the Transcaucasia  
endemic parasitic *Orobanche laxissima* Uhlich & Rätzel

***Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոն***

16. Մելքոնյան Հակոբ Արամի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ա. Ա. Աղաջանյան  
Կենսածին արծաթի նանոմասնիկների բնութագիրը և հակամանրէային  
ակտիվությունը  
Biogenic silver nanoparticles: Characterization and antimicrobial activity
17. Խաչատրյան Ալլա Ֆելիքսի – ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Հ.Հ. Փանոսյան  
Էքստրեմոֆիլ մանրէների էկզոպոլիսախարիդներով սինթեզված արծաթի  
նանոմասնիկների հակամանրէային և հակաօքսիդատնային ակտիվությունները  
Antimicrobial and antibiofilm activities of exopolysaccharide-mediated silver nanoparticles  
synthesized from extremophilic microbes
18. Պողոսյան Նելլի Կարոյի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ա.Վ. Վասիլյան  
Կենսաջրածնի և կենսազանգվածի արտադրությունը E. coli-ում մրգի թափոնների  
յուրացման ընթացքում  
Biohydrogen and biomass production in E. coli during utilization of fruit waste

***Կենդանաբանության ամբիոն***

19. Ներսեսյան Լիանա Գևորգի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ա.Ս. Ղազարյան  
Հրազդանի կիրճի ձեռքաթևավորների բազմազանության ուսումնասիրությունը  
Study of the diversity of bats in the Hrazdan Gorge
20. Ստեփանյան Աննա Արթուրի - ղեկավարներ՝ կ.գ.թ., դոցենտ Ա.Վ. Ասլանյան,  
Պողաբերության կենտրոնի ԱՄԲ լաբորատորիայի վարիչ, սաղմնաբան Ա. Ս.  
Ծառուկյան  
Հայաստանում բնակվող տղամարդկանց սպերմատոզոնների խանգարումների  
ուսումնասիրություն և վերլուծություն  
Study and analysis of spermatogenesis disorders in men living in Armenia
21. Բաբայան Աննա Գագիկի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ա.Վ. Ասլանյան  
Հայաստանում անգղների պոպուլյացիայի դինամիկան և վերարտադրողական  
վարքագիծը  
The dynamics of vulture populations and reproductive behavior in Armenia
22. Զիրջյան Մերի Արտոյի - ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Մ.Ս. Առաքելյան



Ողնաշարավոր կենդանիների վերարտադրողական ռազմավարությունների բազմազանությունը և դրանց էկոլոգիական նշանակությունը  
The diversity of reproductive strategies in vertebrates and their ecological significance

«Կենսաքիմիա» կրթական ծրագիր  
ԲԱԿԱԼԱՎՐ 4-ՐԴ ԿՈՒՐՍ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

1. Ամիրխանյան Նարե Արայի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Վասիլյան Ա. Վ.  
Կաթնաթթվի արտադրությունը և դրա դերը նյութափոխանակության կարգավորման և պրոտոնի հոսքի մեջ *Escherichia coli*-ում ածխածնի խառն աղբյուրների խմորման պայմաններում թթվային pH-ում  
Lactate production and its role in metabolic regulation and proton flux in *Escherichia coli* during fermentation of mixed carbon sources at acidic pH
2. Անտոնյան Լիլիթ Էդուարդի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Գաբրիելյան Լ. Ս.  
Բարձր հաճախությամբ էլեկտրամագնիսական ճառագայթների ազդեցությունը *Arthrospira platensis*-ի աճման չափանիշների և պիգմենտային կազմի վրա  
The effect of high-frequency electromagnetic radiation on growth parameters and pigment content of *Arthrospira platensis*
3. Առաքելյան Արամ Արտակի - ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Փանոսյան Հ. Հ.  
*Ramalina* ցեղի էպիլիթային և էպիֆիտային քարաքոսերի միկրոբիոմների համեմատական վերլուծությունը  
Comparative Analysis of microbiome in corticolous and saxicolous lichens of *Ramalina* species
4. Ասատրյան Հասմիկ Վահագնի - ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Սահակյան Ն. Ժ.  
*Ocimum basilicum* var. *purpureum* բույսի էթանոլային լուծամզվածքի քիմիական կազմը և հակաօքսիդանտային ակտիվության որոշ առանձնահատկությունները  
Chemical composition and some peculiarities of antioxidant activity of *Ocimum basilicum* var. *purpureum* ethanol extract
5. Ասատրյան Տաթևիկ Արամի - ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Փոլադյան Ա. Ա.  
Վերամշակված շիճուկի օգտագործմամբ կենսաջրածնի և հիդրոգենազ ֆերմենտների արտադրության ծախսարդյունավետ մոտեցումը  
A cost-effective approach for the production of biohydrogen and hydrogenase enzymes from recycled whey-based by-products
6. Ասրյան Միլենա Հմայիչի - ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Ավթանդիլյան Ն. Վ.  
Մետֆորմինի և դեղաբույսերի լուծամզվածքների բջջատոքսիկ ազդեցությունը մարդու քաղցկեղային բջջային գծերում  
Cytotoxic effects of metformin and herbal extracts in human cancer cell lines
7. Ավակյան Ֆենյա Նորայրի - ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Ավթանդիլյան Ն. Վ.  
Ֆիտոմիացությունների հակաշաքարախտային ազդեցությունը ստրեպտոգոտոցինով և ճարպային սնունդով խթանված առնետների շաքարախտի փորձարարական մոդելում

Antidiabetic effects of phytochemicals in an experimental rat model of diabetes induced by streptozotocin and high-fat diet

8. Ավետիսյան Վիոլետա Լեոնիկի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Կարապետյան Հ. Մ.  
Սուպերօքսիդիզմի ակտիվության ուսումնասիրությունը աղային սթրեսի ենթարկված ցորենի տերևներում և արմատներում  
Study of superoxide dismutase activity in leaves and roots of wheat exposed to salt stress
9. Արտաշեսյան Անի Տիգրանի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Բարսեղյան Է. Խ.  
Արգինազ I-ի և II-ի արգելակիչների դերը կաթնասունների օրգանիզմում նյութափոխանակային անհավասարակշռության շտկման գործընթացում  
The role of arginase I and II inhibitors in the correction of metabolic imbalances in mammals
10. Բաղդյան Մարիամ Վաչագանի ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Գևորգյան Հ. Խ.  
Թթվակայուն համակարգերի դերը խմորման պայմաններում *Escherichia coli* բակտերիաների աճման և մոլեկուլային ջրածնի արտադրության գործընթացում  
The role of Acid-resistant systems in the growth and production of molecular hydrogen by *Escherichia coli* bacteria under fermentative conditions
11. Բալարեկյան Լիա Սամվելի - ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Մարության Ս. Վ.  
Ուլտրամանուշակագույն ճառագայթահարման ազդեցությունը *Meyerozyma guilliermondii* ATCC 6260 խմորասնկերի ԱԵՖ-ազային ակտիվության վրա  
Influence of UV-radiation on the ATPase activity of yeasts *Meyerozyma guilliermondii* ATCC 6260
12. Գրիգորյան Մելանյա Հովհաննեսի – ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Բազուկյան Ի. Լ.  
ՀՀ տարբեր տարածաշրջանների մեղվի թույնի նմուշների հակազոնիստական ակտիվության համեմատական վերլուծությունը  
Comparative analysis of the antagonistic activity of bee venom samples from different regions of the Republic of Armenia
13. Գրիգորյան Նարինե Միշայի - ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Փանոսյան Հ. Հ.  
Կերատինոլիտիկ թերմոտոլերանտ *Bacillus borbori* M14 շտամի որոշ կենսաբանական առաձևահատկությունների ուսումնասիրությունը  
Study of some biological characteristics of the keratinolytic thermotolerant *Bacillus borbori* M14 strain
14. Իսրայելյան Ալինա Արմենի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Վասիլյան Ա. Վ.  
*Saccharomyces cerevisiae* խմորասնկերի որոշ շտամերի կենսազանգվածի և կենսաէթանոլի արտադրության գնահատումը նախամշակված խառը մրգային թափոնների յուրացման պայմաններում տարբեր pH-ներում  
Evaluation of biomass and bioethanol production of some strains of *Saccharomyces cerevisiae* yeast under pre-treated mixed fruit waste digestion conditions at different pH.
15. Խանադյան Էմմա Արթուրի – ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Բազուկյան Ի. Լ.  
Կանեփի և դանթափայի լուծամզվածների ազդեցությունը *Lactobacillus acidophilus* ER 317/402 և *Lactobacillus rhamnosus* R2002 շտամերի աճի և հակաբակտերիական ակտիվության վրա

Effect of cannabis and scabious extracts on the growth and antibacterial activity of *Lactobacillus acidophilus* ER 317/402 and *Lactobacillus rhamnosus* R2002 strains

16. Կարկարյան Վալենտինա Վիլյամի - ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Մեմերջյան Գ. Հ.  
*Dicranium scoparium* մամուռի լուծամզվածքի ազդեցությունը *Candida guilliermondii* NP-4 խմորասնկերում սուպերօքսիդիզասուտազի և ԱԵՖազային ակտիվության վրա  
Effect of *Dicranium scoparium* moss extract on superoxide dismutase and ATPase activity in *Candida guilliermondii* NP-4 yeast
17. Հարությունյան Սվետլանա Արմենակի - ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Սահակյան Ն. Ժ.  
*Chaerophyllum macrospermum* լուծամզվածքի հակաօքսիդանտային ակտիվության որոշ առանձնահատկությունները  
Some peculiarities of the antioxidant activity of *Chaerophyllum macrospermum* ethanol extract
18. Ղազարյան Աննա Մարի Արթուրի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Գաբրիելյան Լ. Ս.  
ՀՀ-ում մեկուսացված կանաչ ջրիմուռների կենսազանգվածի և H<sub>2</sub> արտադրությունը կարտոֆիլի թափոն պարունակող միջավայրում  
Production of biomass and H<sub>2</sub> in green algae, isolated in Armenia, on potato peel waste-containing medium
19. Մանուկյան Ջուլիետա Կարենի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Վասիլյան Ա. Վ.  
PflA և PflB սպիտակուցների դերը պրոտոնների և կալիումի իոնների տեղափոխության գործընթացում գլյուկոզի տարբեր կոնցենտրացիաների խմորման պայմաններում  
The role of PflA and PflB proteins in the transport of protons and potassium ions during fermentation of different glucose concentrations
20. Մարկոսյան Վարդուհի Պերճի - ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Սահակյան Ն. Ժ.  
*Ribes nigrum* տերևների լուծամզվածքի կենսաբանական ակտիվության որոշ առանձնահատկությունները  
Some features of the biological activity of *Ribes nigrum* leaf extract
21. Մելքոնյան Ռոզի Սուրենի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Կարապետյան Հ. Ս.  
Կատալազի ակտիվության ուսումնասիրությունը ռենտգենյան ճառագայթների և միլիմետրային ալիքների ազդեցությանը ենթարկված *C. guilliermondii* NP-4 խմորասնկերում  
Study of catalase activity in *C. guilliermondii* NP-4 yeast exposed to X-rays and millimeter waves
22. Պատվականյան Նարե Գուրգենի - ղեկավար՝ կ.գ.թ., պրոֆեսոր Թոչունյան Կ. Ա.  
Մոլեկուլային ջրածնի արտադրությունը տարբեր *Clostridia*-ներում սուրճի թափոնների յուրացման ընթացքում  
Molecular hydrogen production in different *Clostridia* during digestion of coffee waste
23. Պետրոսյան Արմինե Զոհրաբի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Գաբրիելյան Լ. Ս.  
*Rhodobacter sphaeroides*-ի և *Parachlorella kessleri*-ի խառը կուլտուրաների աճման և կենսաջրածնի արտադրության առանձնահատկությունները ակոհոլի արդյունաբերական թափոն պարունակող միջավայրում

Peculiarities of growth and biohydrogen production by mixed cultures of *Rhodobacter sphaeroides* and *Parachrorella kessleri* on alcohol industry waste-containing media

24. Մարգարյան Հասմիկ Արամի - ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Ջավրուշյան Հ. Գ.  
Ֆիտոմիացությունների հակաքաղցկեղային ազդեցությունը կրծքագեղձի քաղցկեղի փորձարարական մոդելում  
Anticancer effects of phytochemicals in an experimental model of breast cancer
25. Փեթակյան Նունե Կորյունի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Աղաջանյան Ա. Ա.  
*Rumex obtusifolius* բույսից սինթեզված արծաթի նանոմասնիկների հակաբակտերիական ակտիվության գնահատումը  
Assessment of the antibacterial activity of silver nanoparticles synthesized from *Rumex O btusifolius*

«Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա» կրթական ծրագիր  
ԲԱԿԱԼԱՎՐ 4-ՐԴ ԿՈՒՐՍ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

1. Ալոյան Մերի Վիգենի - ղեկավար՝ կ.գ. դ., պրոֆ. Վարդևանյան Պ. Հ.  
Մինթետիկ, հիբրիդային երկշղթա պոլինուկլեոտիդների հետ էթիդիումի բրոմիդի և Մեթիլենային կապույտի համալիրների ուսումնասիրությունը կլանման սպեկտրասկոպիայի մեթոդով  
Study of Ethidium bromide and Methylene blue complexes with synthetic, hybrid double-stranded polynucleotides by absorption spectroscopy
2. Ամիրխանյան Սոնա Ջանիկի - ղեկավար՝ կ.գ. դ., պրոֆ. Վարդևանյան Պ. Հ.  
Մարդու արյան էրիթրոցիտների որոշ պարամետրերի փոփոխությունը ասպիրինի առկայության պայմաններում  
Changes in some parameters of human erythrocytes in the presence of aspirin
3. Արամյան Արամ Գոռի - ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Փարսադանյան Մ. Ա.  
Մեթիլենային կապույտի և Hoechst 33258 կապման ուսումնասիրությունը ալբումինի հետ ֆլուորեսցենտային սպեկտրոսկոպիայի եղանակով  
Study of binding of methylene blue and Hoechst 33258 to albumin by fluorescence spectroscopy.
4. Բաղայան Մարիամ Իշխանի - ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ. Վարդևանյան Պ. Հ.  
Միա- և երկշղթա պոլինուկլեոտիդների հետ Hoechst 33258 միացության համալիրների ուսումնասիրությունը ֆլուորեսցենտային սպեկտրասկոպիայի մեթոդով  
Study of complexes of Hoechst 33258 with single- and double-stranded polynucleotides by fluorescence spectroscopy.
5. Եղսապետյան Լուսինե Մկրտիչի - ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Անտոնյան Ա.Պ.  
Միաշղթա հոմոպոլիռիբոնուկլեոտիդներ poly(rA)-ի և poly(rU)-ի հետ ՄԿ-ի խնամակցության աստիճանի գնահատումը  
Assessment of the degree of MB attachment with single-stranded homopolyribonucleotides poly(rA) and poly(rU)
6. Կարապետյան Արսեն Արտակի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Շահինյան Մ.Ա.  
կ.գ.թ., գիտաշխատող Առաքելով Վ.Գ.

14-3-3-ի կարգավորիչ նշանակությունը DRD1-G protein փոխազդեցության համար  
Regulatory significance of 14-3-3 for DRD1-G protein interaction

7. Կարապետյան Կարեն Մխիթարի - ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Շահինյան Մ. Ա.

Շիճուկային ալբումինի հետ էրիթրոզին Բ-ի փոխազդեցության ուսումնասիրությունը  
միլիմետրային տիրույթի էլեկտրամագնիսական ալիքների ներքո

Study of the interaction of serum albumin with erythrosine B under the effect of millimeter range electromagnetic waves

8. Մաղաքյան Սմբատ Սերգեյի - ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Փարսադանյան Մ. Ա.

կ.գ.դ., պրոֆեսոր Եպիսկոպոսյան Լ. Մ.

Հայկական գենոֆոնդի կառուցվածքը ըստ ամբողջական գենոմի տվյալների

The structure of the Armenian gene pool based on whole-genome data

9. Նիկոլյան Աննա Գուրգենի- ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Շահինյան Մ. Ա.

Միլիմետրային տիրույթի էլեկտրամագնիսական ալիքների ազդեցության  
ուսումնասիրությունը ակրիդինային նարնջագույնի հետ ցուլի շիճուկային ալբումինի  
փոխազդեցության վրա

Study of the influence of millimeter range electromagnetic waves on bovine serum albumin interaction with acridine orange

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի 2024-2025 ուս. տարվա առկա և հեռակա ուսուցմամբ ուսանողների ավարտական աշխատանքների ներկայացված թեմաները և գիտական ղեկավարներին:

2. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հայցորդ Սվետլանա Մարատի Հովհաննիսյանի (գիտական ղեկավար՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ., «Կենսաբանություն» ԳՀԻ Հիմնարար և ախտաբանական կենսաքիմիայի լաբորատորիայի վարիչ՝ Ն. Վ. Ավթանդիլյան) ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան, կ.գ.դ., դոցենտ Կ. Ա. Ղազարյանը: Նշվեց, որ հաշվետու տարվա ընթացքում հայցորդը մասնակցել է հետևյալ դասընթացներին և հավաքել գումարային 26 կրեդիտ.

1. Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն – 4 կրեդիտ,
2. Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ – 4 կրեդիտ,
3. Գիտության փիլիսոփայություն – 6 կրեդիտ,
4. Մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն – 3 կրեդիտ,
5. Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում – 3 կրեդիտ,
6. Համալսարանական դասավանդման դիդակտիկա – 3 կրեդիտ,

7. Անձնային աճի ինքնակարգավորում – 3 կրեդիտ:

Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են մի քանի հայկական դեղաբույսերի լուծամզվածքների *in vitro* փորձեր, մասնավորապես ուսումնասիրվել և գնահատվել է դրանց բջջատոքսիկ հատկությունները, կատարվել է ֆլուորեսցենտային պատկերավորում և դրանց դիտարկում Cytation C10 confocal սարքով: Տվյալների հիման վրա տպագրվել է 1 գիտական հոդված՝ «5-fluorouracil and Rumex obtusifolius extract combination trigger A549 cancer cell apoptosis: uncovering PI3K/Akt inhibition by *in vitro* and *in silico* approaches» վերնագրով, Scientific Reports միջազգային ամսագրում (2024-06-25, DOI: 10.1038/s41598-024-65816-5), 1 թեզիս, որը ներկայացվել է Եվրոպական կենսաքիմիկոսների ասոցիացիաների ֆեդերացիայի 48-րդ կոնգրեսում պաստառային զեկույցով, «Investigating the anticancer advantages of pairing Rumex obtusifolius herb extract with 5-fluorouracil against breast cancer *in vivo*» վերնագրով, ևս 1 հոդված գտնվում է տպագրման փուլում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը և հաշվետու ժամանակահատվածում հայցորդի կողմից պլանով նախատեսված ուսումնական և հետազոտական աշխատանքների կատարումը, ատեստավորել կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հայցորդ Սվետլանա Մարատի Հովհաննիսյանին:

3. ԼՍԵՑԻՆ՝ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Հովիկ Հարությունի Փանոսյանի՝ «ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ-ԻՀԱՀԽ 2023» մրցույթի շրջանակներում իրականացվող «Հայաստանի էքստրեմալ միջավայրերից մեկուսացված էքստրեմոֆիլ մանրէները որպես էկզոպոլիսախարիդների ստացման աղբյուր. էկզոպոլիսախարիդների քիմիական կառուցվածքն ու սինթեզն ապահովող գեները» 23SC-CNR-1F010 ծածկագրով թեմայի ամփոփիչ հաշվետվության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ. Ա. Ղազարյանը, դոցենտ Հ. Հ. Փանոսյանը: Նշվեց, որ համաձայն նախատեսված ժամանակացույցի իրականացվել է էկզոպոլիսախարիդ (ԷՊՍ) արտադրիչ մանրէների սքրինինգ ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնում ստեղծված էքստրեմոֆիլ մանրէների կուլտուրաների հավաքածուից, մեկուսացվել և ֆենոտիպական ու ֆիլոգենետիկական բնութագրիչների հիման վրա նույնականացվել են ԷՊՍ-արտադրիչ նոր էքստրեմոֆիլ մանրէների կուլտուրաներ, ուսումնասիրվել է ԷՊՍ արտադրության կինետիկան, ԷՊՍ արտադրության տեսակարար էլքը աճեցման ժամանակից, ջերմաստիճանից և սննդամիջավայրում ածխածնի աղբյուրից կախված: Քրոմատոգրաֆիական տարբեր մեթոդների (TLC, GC-MS, HPAE-PAD) համակցությամբ

մաքրվել են անջատված ԷՊՍ-ները և որոշվել են դրանց քիմիական կազմը, իսկ PAGE մեթոդով՝ մոլեկուլային զանգվածները: Որոշվել են ԷՊՍ-ների օպտիկական ռոտացիայի, ինչպես նաև  $^1\text{H}$  և  $^{13}\text{C}$  NMR սպեկտրների արժեքները՝ մոնոմերային մոլեկուլների կոնֆիգուրացիայի և պոլիմերում կապերի բնույթը ճշտելու նպատակով: Մեքվենավորվել են ԷՊՍ-ակտիվ արտադրիչ մանրէների ամբողջական գենոմները և վերծանվել են ԷՊՍ-ների սինթեզի, արտազատման և հավաքման փուլերը կողավորող գեները, համեմատական էվոլյուցիոն մեթոդներով վերլուծվել են ԷՊՍ-ի սինթեզը կողավորող գենային կլաստերները: Հայկական խմբի երիտասարդ հետազոտող, ասպիրանտ Դիանա Ղևոնդյանը (երկու անգամ՝ ընդհանուր առամամբ 4 ամսով) և խմբի ղեկավարը գործուղվել են համագործակից Նեապոլի Կենսամոլեկուլային քիմիայի ինստիտուտ փորձի փոխանակման, գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու, ԷՊՍ-ների քիմիական և կառուցվածքային վերլուծության, ստացված արդյունքների համատեղ մշակման, գիտական հոդվածների նախագծման ու քննարկման նպատակով: Հետազոտության արդյունքները խմբի անդամների կողմից ներկայացվել են միջազգային մի շարք կոնգրեսներում պլենար զեկուցումներով (CEESME Symposium, September 11-16, 2023, Budapest, Hungary; “Climate Changes: Adaptation” conference, March 27–28, 2023, Yerevan, Armenia) և պոստերային հաղորդմամբ (Extremophiles Congress, September 18-22, 2022, Loutraki, Greece; FEMS 10th Congress, 9-13 July, 2023, Hamburg, Germany; Thermophiles August 29-September 2, 2023, Bangor, UK; FEBS 48th Congress June 29-July 3, 2024, Milano, Italy; ISME 19th 18-23 August, 2024, Cape Town, SA; 14th International Congress on Extremophiles September 22-26, 2024, Loutraki, Greece; 18th Congress of IUMS 23-25, 2024. Florence, Italy, «Ամենամյա ամփոփիչ գիտաժողով - 2024» դեկտեմբերի 7-15, Երևան, ՀՀ): Տպագրության են նախապատրաստվում միաժամանակ 4 գիտական հոդվածներ՝ ազդեցության բարձր գործակցով ամսագրերում տպագրության համար: Խմբի աշխատանքները լուսաբանվել են հանրային հեռուստատեսության և ռադիոյի հաղորդումներում:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** վերոհիշյալ թեմայի օրացուցային պլանով նախատեսված աշխատանքները համարել ավարտված:

**4. ԼՍԵՑԻՆ՝** ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում «Շրջակա միջավայրի պահպանություն և կենսավերահսկողություն» մագիստրոսական կրթական ծրագրի մեկնարկի հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ղեկան, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆ. Ս.Գ. Նանազյուլյանը, կենդանաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ս. Առաքելյանը, Ետյանը: Նրանց կողմից նշվեց, որ ուսումնասիրելով աշխատաշուկայի պահանջներն ու

առկա ռեսուրսները և հաշվի առնելով բակալավրիատում սովորող ուսանողների թվաքանակի շարունակական կրճատումը, նախատեսվում է «Էկոլոգիա և կենսառեսուրսների կառավարում», «Կենդանաբանություն և մակարուծաբանություն» և «Բժշկական սնկաբանություն և կիրառական բուսաբանություն» մագիստրոսական ծրագրերի փոխարեն բացել միջամբիոնային (Էկոլոգիայի և բնության պահպանության, բուսաբանության և սնկաբանության, կենդանաբանության ամբիոններ) նոր մագիստրոսական ծրագիր՝ «Շրջակա միջավայրի պահպանություն և կենսավերահսկողություն»:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով մագիստրոսական նոր ծրագրի կարևորությունը և արդիականությունը, երաշխավորել «Շրջակա միջավայրի պահպանություն և կենսավերահսկողություն» մագիստրոսական կրթական ծրագրի հայտի մեկնարկը:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ՝

Կ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ՝

Ի.Վ. Շահազիզյան

